ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆԸ ՆԱԽԱՊԵՍ ՀՐԱՊԱՐԱԿԵԼՈՒ ՄԻՋՈՑՈՎ ԲԱՆԱԿՑԱՅԻՆ ԸՆԹԱՑԱԿԱՐԳՈՎ ԿՆՔՎԱԾ ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ԿԱՏԱՐՎԱԾ ՓՈՓՈԽՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Պատվիրատու՝ ՀՀ ֆինանսների նախարարությունը, որը գտնվում է ք. Երևան Մելիք Ադամյան 1 հասցեում, ստորև ներկայացնում է ՖՆ-ԲԸՀԱՇՁԲ-15/2 ծածկագրով հայտարարությունը նախապես հրապարակելու միջոցով բանակցային ընթացակարգի արդյունքում 2015թ-ի հուլիսի 14-ին կնքված պայմանագրում 2015թ-ի նոյեմբերի 13-ին կատարված փոփոխության վերաբերյալ համառոտ տեղեկատվությունը:

Փոփոխության պատճառ 1: Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1095 - Ն որոշմամբ Հայաստանի Հանրապետության կառավարության 2014 թվականի դեկտեմբերի 18-ի «Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի կատարումն ապահովող միջոցառումների մասին» N 1515-Ն որոշման NN 5 և 12 հավելվածներում կատարվել են փոփոխություններ:

Փոփոխության նկարագրություն: Կատարվել է Պայմանագրի գնման ժամանակացույցում փոփոխություն և աշխատանքների կատարման գնման ժամանակացույցը հաստատվել է նոր խմբագրությամբ: Փոփոխությունը կատարվում է ՀՀ կառավարության 10.02.2011թ. № 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման մասին» կարգով սահմանված պայմաններին համապատասխան՝ Պայմանագրի 8.4 կետի համաձայն:

Փոփոխության հիմնավորում: Հայաստանի Հանրապետության կառավարության 2015 թվականի սեպտեմբերի 25-ի N 1095 - Ն որոշում:

Սույն հայտարարության հետ կապված լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար կարող եք դիմել գնումների համակարգող՝ Գ. Ջանջուղազյանին:

Հեռախոս՝ 094 49 13 38:

Էլ.փոստ՝ info@interlimens.com:

Պատվիրատու՝ ՀՀ ֆինանսների նախարարություն:

ՀԱՄԱՁԱՅՆԱԳԻՐ

2015թ. հուլիսի 14-ին կնքված N ՖՆ-ԲԸՀԱՇՁԲ-15/2 պայմանագրի

ք. Երևան "..13.." « նոյեմբերի » 2015թ.

ՀՀ ֆինանսների նախարարությունը, ի դեմս աշխատակազմի ղեկավար Ա. Արզումանյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, (այսուհետ՝ Պատվիրատու), մի կողմից, «Սահակյանշին» ՓԲԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Ս.Սահակյանի (այսուհետև՝ Կապալառու), մյուս կողմից, երկուսը միասին այսուհետև Կողմեր, հիմք ընդունելով Կողմերի միջև 14/07/2015թ. կնքված N ՖՆ-ԲԸՀԱՇՁԲ-15/2 պայմանագրի (այսուհետև՝ Պայմանագիր) 8.4 կետը, կնքեցին սույն համաձայնագիրը (այսուհետև՝ Համաձայնագիր) հետևյալի մասին:

1. Համաձայնագրի առարկան

1.Կողմերը որոշեցին՝

1.1 Պայմանագրի 1.3 կետը հաստատել նոր հետևյալ խմբագրությամբ.

«Սույն պայմանագրով նախատեսված Աշխատանքները սկսվում են Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց հետո և կատարման ժամկետը սահմանվում է՝ 2016թ. սեպտեմբերի 1-ը ներառյալ:

Սույն պայմանագրով նախատեսված առանձին տեսակի աշխատանքների, փուլերի և ծավալների կատարման ժամկետները որոշվում են կողմերի կողմից համաձայնեցված օրացուցային գրաֆիկով (Հավելված N 2):»

1.2 Պայմանագրի N 2 հավելվածը՝ օրացուցային գրաֆիկը, հաստատել նոր խմբագրությամբ համաձայն Համաձայնագրի N 1 հավելվածի.

2. Այլ պայմաններ

2.1 Սույն համաձայնագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը:

2.2 Սույն համաձայնագրում չնշված՝ Կողմերի Պայմանագրով ստանձնած իրավունքներն ու պարտականությունները թողնվում են անփոփոխ:

2.3 Սույն համաձայնագիրը կազմված է 2 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

3. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ

ՀՀ ֆինանսների նախարարություն
ք.Երևան, Մ. Ադամյան 1
ՀՀ ՖՆաշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02629081
ՀՀ 900013202016
ՀՀ 900013574018

(ստորագրություն)

ԿԱՊԱԼԱՌՈՒ

ք. Երևան, Արարատյան 117/1
«Էյչ Էս Բի Սի Բանկ» Հայաստան
ՀՀ 217001075852001
ՀՎՀՀ 02224769

(ստորագրություն)

Հավելված 1
" 14 " հուլիսի 2015թ. կնքված
N ՖՆ-ԲԸՀԱՇՁԲ-15/2 պայմանագրի հիման վրա
"..13..." «նոյեմբերի» 2015թ. կնքված համաձայնագրի

ՕՐԱՑՈՒՑԱՅԻՆ ԳՐԱՖԻԿ

Իջևանի ՏՀՏ վարչական շենքի վերակառուցման աշխատանքների կատարման

N ը/կ	Կապալառուի կողմից կատարվելիք աշխատանքների առանձին տեսակների անվանումները	Աշխատանքների կատարման ժամկետը	
		Սկիզբը	Ավարտը
1	Իջևանի ՏՀՏ վարչական շենքի վերակառուցման աշխատանքներ	Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	2016թ. սեպտեմբերի 1-ը:
ԸՆԴԱՄԵՆԸ		Պայմանագիրը ուժի մեջ մտնելու օրը	2016թ. սեպտեմբերի 1-ը:

ՊԱՏՎԻՐԱՏՈՒ
ՀՀ ֆինանսների նախարարություն
ք.Երևան, Մ. Ադամյան 1
ՀՀ ՖՆաշխատակազմի գործառնական վարչություն
ՀՎՀՀ 02629081
Հ/Հ 900013202016
Հ/Հ 900013574018

(ստորագրություն)

ԿԱՊԱԼԱՌՈՒ
ք. Երևան, Արարատյան 117/1
«Էյչ Էս Բի Սի Բանկ» Հայաստան
Հ/Հ 217001075852001
ՀՎՀՀ 02224769

(ստորագրություն)